Հավելված
Հաստատված է
Վաղարշապատ համայնքի ավագանու
«28» փետրվարի 2025 թվականի
Թիվ 13-Լ որոշմամբ

Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ (ԿԱՄ) ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք **և (կամ)** վճար վճարողների հաշվառման, գրանցամատյանների վարման կարգը և գրանցամատյանների ձևերը:

2. Տեղական տուրք և **(կամ)** վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք **և (կամ)** վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:

3. Գրանցամատյանները դասակարգվում են՝

1) տեղական տուրք վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),

2) տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),

3) տեղական տուրք վճարող իրավանաբական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 3),

4) տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 4):

4. Գրանցամատյանները վարվում են Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համապատասխան ոլորտի բաժիններում՝ բաժինների պետերի պատասխանատվությամբ:

5. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:

6. Տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները կարող են լինել փաստաթղթային կամ էլեկտրոնային (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով) ձևով:

7. Փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները էջակալվում, կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:

8. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

1) գրանցամատյանի վարման տարեթիվը,

2) տեղական տուրքի և (կամ) վճարի տեսակը,

3) գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը,

4) գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը,

5) տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցման հերթական համարը,

6) համայնքի ղեկավարի որոշման համարը և ամսաթիվը, որի հիման վրա գանձնվել է տուրք և (կամ) վճար (լրացվում է առկայության դեպքում),

7) տեղական տուրքի և (կամ) վճարի չափը,

8) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք և (կամ) վճար,

9) տեղական տուրք և (կամ) վճար վճարող ֆիզիկական անձնաց դեպքում գրանցամատյաններում (Ձև 1, Ձև 2) ներառվում են նաև՝

ա. ֆիզիկական անձի անունը, ազգանունը (տվյալ լինելու դեպքում՝ հայրանունը),

բ. հաշվառման հասցեն,

գ. անձը հաստատող փաստաթղթերի տվյալները.

10) տեղական տուրք և (կամ) վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերի դեպքում գրանցամատյաններում (Ձև 3, Ձև 4) ներառվում են նաև՝

ա. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,

բ. գրանցման հասցեն,

գ. գործունեության հասցեն,

դ. հարկ վճարողի հաշվառման համարը.

9. Տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են համապատասխան բաժնի պետի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ, իսկ էլեկտրոնային վարման դեպքում արխիվացվում են կրիչի վրա և հանձնվում աշխատակազմին:

10. Գրանցամատյանները կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ) և բյուջետային հիմնարկներում (ԲՀ), որտեղ գանձվում է տեղական տուրք և (կամ) տեղական վճար:

11. ՀՈԱԿ-ներում և ԲՀ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները ստորագրվում են տնօրենի և (կամ) հիմնարկի ղեկավարի կողմից, կնիքի առկայության դեպքում նաև կնիքվում, իսկ էլեկտրոնային վարման դեպքում արխիվացվում են կրիչի վրա և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

12. Գրանցամատյանների Ձև 1-ը, Ձև 2-ը, Ձև 3-ը և Ձև 4-ը կցվում են: